

Mastercard քարտերով «Սնվիր 100% համեղ, խնայիր 30% քո mastercard-ով» արշավի մասնակցության պայմաններ

1. Սույն թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2025 թվականի հունվարի 13-ն ընկած ժամանակահատվածում Mastercard տեսակի քարտերի (Mastercard Standard, Mastercard Gold, Mastercard World Black Edition քարտեր, բացառությամբ Mastercard Business քարտի) (այսուհետ՝ Քարտ), քարտապանների (այսուհետ՝ Քարտապան) համար հնեկրթանկ ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից իրականացվում է արշավ (այսուհետ՝ Արշավ):
2. Արշավի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը հասանելի է www.inecobank.am կայքում:
3. Մասնակցելով Արշավին՝ Քարտապանն ընդունում է սույն արշավի մասնակցության պայմանները:
4. Բանկն իրավունք ունի ցանկացած պահի փոփոխություն կատարել սույն փաստաթղթում, որի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը կտեղադրվի www.inecobank.am կայքում:
5. Արշավը նախատեսված է գործող և նոր Քարտերի համար: Արշավի մասնակցությունը կատարվում է վճարում կատարելիս և չի ենթադրում որևէ լրացուցիչ անդամավճար կամ այլ տեսակի վճարներ:

Ընդհանուր պայմաններ.

6. Արշավի մասնակցության նպատակով սույն թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2025 թվականի հունվարի 13-ը ներառյալ Քարտապանները պետք է՝
 - 6.1 Քարտով կատարեն վճարումներ COLLECTIVE, CHINAR RESTAURANT, LOUIS CHARDEN, VOSTAN RESTAURANT, ALASKA RESTAURANT, SQUARE ONE, SEGAFREDO, BLACK ANGUS, SORRISO, INTEMPO, LIMONE CASCADE, BEER ACADEMY ETHNOGRAPH,

DE GUSTO, THE GARDEN, PAULANER, MINA, JULIS, KTOOR, ZEN ռեստորաններում (այսուհետ՝ Ռեստորաններ)՝ Ինեկոբանկի Pos տերմինալների միջոցով,

7. Արշավի պայմաններին բավարարած յուրաքանչյուր Քարտապանի միանվագ կտրամադրվի Ռեստորաններում կատարված վճարումների հանրագումարի 30 տոկոսի չափով միանվագ քեշբեք, առավելագույն գումարը՝ 20 000 ՀՀ դրամ:
8. Արշավի ընթացքում հաշվարկվում է Քարտապանի յուրաքանչյուր գործող Քարտով կատարված վճարումները:
9. Արշավի շրջանակում միանվագ քեշբեքը Քարտապանին տրամադրվում է առանց որևէ հարկային պարտավորության: Հարկային պարտավորությունների կատարումը ստանձնում է Բանկը:
10. Կից Քարտերի Քարտապանները չեն կարող մասնակցել Արշավին:
11. Վճարային գործարքները հաշվարկելու համար հիմք է ընդունվում գործարքի կատարման ամսաթիվը:
12. Վճարային գործարքների հանրագումարի հաշվարկում չեն ներառվելու չեղարկված գործարքները:
13. Արշավի մասնակցի Քարտը միանվագ քեշբեքի տրամադրման պահին պետք է լինի գործող:
14. Բանկի կողմից զեղծարար գործարքի վերաբերյալ հիմնավոր կասկած ունենալու պարագայում Քարտապանի մասնակցությունը կարող է անվավեր ճանաչվել: Ձեղծարար գործարքի չափանիշները սահմանվում և որոշվում են Բանկի կողմից:
15. Արշավի գործողության ընթացքում և վերջինիս շրջանակներում հաշվարկված միանվագ քեշբեքը միանվագ փոխանցվելու է Քարտապանի ընթացիկ դրամային հաշվին մինչև 31.01.2025թ.-ը:

Ինեկոբանկ ՓԲԸ մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքէջ՝ www.inecobank.am, կամ զանգահարել 010-510-510 հեռախոսահամարով:

Ինեկոբանկ ՓԲԸ-ն վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից: